

13), Երուսաղէմի բնակիչները կը բերէին յառաջանալով՝ Յիսուսը դիմաւորելու համար: Պատմուածքը աւելի յարակցութեամբ մը կ'ենթադրէ թէ այս արմաւենիները քաղաքէն բերուած էին, ուր պատրաստ կ'ըլլային տօներու օրուան համար: Մատթէոսի (ԻՍ. 8) և Մարկոսի (ԺՄ. 8) ըսածին նայելով՝ ժողովուրդը ճանապարհի ծառերէն ճիւղեր կտրելով հողին վրայ կը տարածէր, ասոնք ձիթենիի ճիւղեր էին. ծաղկումէն առաջ (որ տեղի կ'ունենար Մայիսին) այս ծառերէն ճիւղեր կտրելը կարեոր չէր, եւ ամբողին ալ ստուգիւ հոգ չէր ըներ (Dal. էջ 335-336):

«Արմաւենիին կրօնական արարողութեան մէջ դեր մը կը կատարէ: Աւետարանը կը պատմէ թէ Երուսաղէմի ժողովուրդը արմաւենիի ճիւղերով դիմաւորած էր Յիսուսը, երբ հանդիսաւորապէս Ան կը մտնէր Ս. քաղաքը. եկեղեցին ալ Ծաղկազարդի տօնը հաստատած է յաւերժացնելու համար անոր յիշատակը և արմաւենիի քանդակ մը որ Ս. Յարութեան Տաճարին ճակատի դրան բարաւորներուն վրայ կը գտնուի՝ կը ներկայացնէ Յիսուսի մուտքը յերուսաղէմ: Ս. Յարութեան մերձակայ փողոցը կը կոչուի Paumierներու (*) փողոց. այս բառով սակայն պէտք չէ արմաւենի հասկնալ, այլ ուխտաւորներ որ կուգային օրհնել տալու Ս. Յարութեան Տաճարին մէջ այն արմաւենիներու ճիւղերը զոր պիտի տանէին իբր յիշատակ և վը-

(*) Paumier (Palmaris, Palmifer) Տանգէի տւած բացատրութան համաձայն (st'u vita nuova), կը նշանակէ՝ ան որ համբողջութիւն կ'ընէ ծովէն անդին եւ բերած է ուխտաւորի արմաւենին: Ըստ միեւնոյն բանաստեղծին՝ (st'u Purgatorio, canto XXXIII), Paumier կ'ըսուի այն ուխտաւորին որ Ս. Տեղերէն կը բերէ արմաւենիի ոստրով զարդարուած իր ուխտաւորացուպը (D. Cr. էջ 806):